



Ս Փ Յ Ո Ւ Ռ Ք Ո Ւ Ս

ՏԵՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՄԸ ԳԵՄՄԵՍԿՈՍԻ ԿԵԹՈՂՒԿՈՍԱԿԱՆ ՓՈՒՍԵՆՈՐԻ ԾԵՎԱՐԾ ՎԱՐԴԱՊԵՏԻ ՀԵՏ

Ինչպես երեկ հաղորդեցինք, երեկ խմբագրությունս այցելեց Հոգեշնորհ Եավարշ վարդապետ Գուլոսմճյան: Առիթնն օգտվելով հետևյալ տեղեկությունները քաղեցինք Գամասկոսի հայ դադուքի մասին:

— Գամասկոսի հայության թիվը կհասնի յոթ հազարի, Հոմսի և շրջաններուն ժողովուրդը՝ հազար հոգիի, որոնք իրենց ապրուստը կձարեն առևտուրով և արհեստով. ազատ ասպարեզ ունեցող բավական թվով հայեր ալ կան, իսկ մեկ մասն ալ կապրի սև աշխատանքով և բոլորն ալ կապրին խաղաղորեն և որպես Սուրիո քաղաքացիներ կվայելեն ամեն ազատություն:

— Ազգային դպրոցական գործերը կանոնավոր վիճակի մեջ են: Թարգմանչացի տնօրենն է պարոն Նուպար Աբգարյան, իսկ Սահակյանինը՝ Ստ. Թիթեղյան: Երկու դպրոցները, ինչպես նաև Բարգենյան մանկապարտեզը, ենթակա են Ազգային իշխանության:

Դպրոցական ծրագրին մեջ փոփոխություն մտցվեցավ այն ձևով, որ աշակերտը ներկայանա արաբական «Աերտիֆիկայի» քննությանց:

Դժբախտաբար հարուստ դասակարգը կշարունակե իր զավակները ղրկել օտար վարժարաններ:

Կազմված է և կանոնավորապես կգործե Ազունիեի նորակազմ հանձնախումբը:

Ազգային ժողովները կանոնավորապես կգործեն: Ի մոտո պիտի գտնարվի Գավա-

ռական ժողովը՝ ընտրելու կաթողիկոսական ընտրության պատգամավորները:

Բյուտջեն ինքնաբավ է և կդոցվի ազգայիններու զոհողությամբ:

Քանի մը տարվան մեջ նորոգվեցավ եկեղեցին և բակը: Առաջնորդարանը օժտվեցավ ջուրով, որ նախապես շունբու Նիկողեցիի ներքին կողմը ծեփվեցավ, յուղաներկվեցավ գմբեթը, վտանգված մասը 6 օղակով ամրապնդվեցավ:

Այս բոլորին համար ծախսվեցավ 7.000 ոսկի, բացի բակի սալահատակումեն, ուր ծախսվեցավ 4.000 ոսկի:

Այս անգամ իբր երեսփոխան ընտրվեցավ մեկ քրիստոնյա (Գամասկոսի շրջաններին)՝ դոկտ. Յուսուֆ Զբրան Լուիզ:

Ժողովուրդին մեջ կտիրե համերաշխական ոգին:

— «Ի՞նչ է ձեր կարծիքը կաթողիկոսական ընտրության մասին» հարցումին հոգեշնորհը պատասխանեց.

— Սխալ է նեղություն պատճառել 80-ամյա Ամենապատիվ Տ. Գարեգին Պատրիարքին. նախ նորին Ամենապատվությունը հազիվ սկսած է կազմակերպել այդ կարևոր թեմը (մոտ 100.000), բանալ նոր դպրեվանք մը: Հազիվ թե գտնվի արժանավոր թրքահայտալ մը իր բացը գոցելու համար:

Իմ կարծիքով, ավելցուց հոգեշնորհ Եավարշ վարդապետ, լավագույն և արժանավոր կաթողիկոսական թեկնածուն կնկատեմ գերաշնորհ Խաղ արքեպիսկոպոս Աջապահյանը:

(«ԱՐԱՐԱՏ», 23 հոկտեմբերի 1953 թ):

ՋԱԿԱՐԳՈՅԻ ՈՒ ՍՈՒՐԵԲՏԵՍԵՑԻ ՀՆՅԵՐԸ

Քառասուն հայեր կապրին Ինդոնեզիայի մայրաքաղաք Ջակարտայի (նախկին Բատավիտ) մեջ: Ունին ազգային վարչություն մը, որ կհսկե ֆոնդերու և եկամտաներու վրա:

Ս. Հովհաննես եկեղեցին կառուցված է 1854-ին տիկին Խաթունի և օրհորդ Թադուհի բարերարությունը: Կան մանուկներու և որբեակրիներու հատուկ ֆոնդեր, որոնցմե կօգտվին չքավոր սան ու սանուհիներ, ինչպես նաև կարոտյալներ:

Սուրբարայի մեջ կան 250 հայեր: 1928-ին կառուցված է Ս. Գեորգ եկեղեցին: Ունին երկու կրթարաններ՝ «Մանուկ» և «Հա-

րություն» անուններով: Ունին երաժշտասեր և թատերասիրաց երկու միություններ, որոնք հանդեսներ կսարքեն, ներկայացումներ կուտան:

Հ. Բ. Ը. Միությունը Սուրբարայի մեջ ունի մասնաճյուղ մը:

Սուրբարայի հայ գաղութը ունի դեռ Գուրյան գրադարան-ընթերցարանը, ինչպես նաև մարզական ակումբ մը:

Հայեր կան նաև Մաքսսար կղզիին վրա և այլուր: Ընդամենը շուրջ 400 հայեր կան Ինդոնեզիական հանրապետության մեջ:

(«ԶԱՄԹՈՒՆՔ», 20 նոյեմբերի 1953 թ.):

ԽՈՒՄԲ ՄԸ ՍՈՎԵՏՆԿԱՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ ՓԱՐԻԶԻ ՄԵՋ

Շահինյան և Ազարյան ապշեցուցին Փարիզի մարզանք հասարակությունը

ՓԱՐԻԶ.— Յրանսա—ՍՍՄՄ ընկերության հրավերով խումբ մը սովետ մարզիկներ վերջերս այցելեցին Փարիզ և Յրանսայի զանազան քաղաքները: Այս խումբին մաս կկազմեին Սովետական Հայաստանի երկու համբավավոր ախոյաններ՝ Հրանտ Շահինյան և Ալբերտ Ազարյան:

Փարիզի Հ.Մ.Ը.Մ.-ը օգտվելով այս բարեպատեհ առիթն՝ սիրալիք ընդունելություն մը կազմակերպած էր Փարիզի Հայկական տան սրահներուն մեջ՝ ի պատիվ սովետ մարզիկներուն:

Հայ մարզասեր երիտասարդներու հոծ բազմություն մը եկած էր ջերմագին խանդավառությամբ ծափահարելու մեր երկրին մարզիկները: Շահինյանն ու Ազարյանը շնորհալիորեն սեղմելով իրենց երկարող հարյուրավոր ձեռքերը, հաճույքով կպատասխանեին իրենց ուղղված բոլոր հարցումներուն: Հետո Հայրենիքեն ժամանող երկու ախոյանները ջերմապես շնորհավորեցին Փարիզի զույգ սեներու պատկանող հայ մարզիկները:

Փարիզի Հ.Մ.Ը.Մ.-ի նախագահը՝ Մ. Տարոնյան բարեգալուստի մաղթանքի խոսքերեն հետո իրենց հանձնեց բաժակներ, խնդրելով իրենցմե հաղորդել Սովետական Միության, ինչպես նաև Հայաստանի մարզիկներուն, Յրանսայի հայ եղբայրներուն անկեղծ դպացումներու հավաստիքը:

Որոտընդոստ ծափահարություններու տակ Հրանտ Շահինյան խոսք առավ: Հազիվ երեսուն տարեկան, իսկական հայու տիպար, սև բեղերով երկայնահասակ այս հսկան, ա-

մոանացած և երկու զավակներու արժանավոր հայրը, որ միջազգային ախոյանական մրցումներուն մեջ փայլուն հաջողություն ձեռք բերավ, և այժմ իրավագիտական ուսումը կշարունակե Երևանի համալսարանի մեջ փաստաբան ըլլալու համար, հետևյալ ձևով պատասխանեց Տարոնյանի բարեգալուստյան մաղթանքի խոսքերուն.—

«Բարեկամներ, Սովետական Միության մարզիկներու պատգամավորությունը չափազանց զգացված է իրեն հանդեպ եղած այս սիրալիք ընդունելութենեն, որուն համար անկեղծորեն շնորհակալ ենք: Կհուսամ, որ այս հանդիպումը վերջինը չէ, որ պիտի ըլլա. ես կկարծեմ, որ մենք հաճախ առիթ պիտի ունենանք հանդիպումներ ունենալ, ըլլա հոս (Յրանսա), ըլլա մեր Մայր Հայրենիքին մեջ:

«Ծս խոսք կուտամ Ձեզի՝ մեր Հայաստան վերադարձին ձեր անունով ողջունել հայ ժողովուրդը և ըսել իրենց, թե Յրանսայի հայերը անբախտելիորեն կապված են Մայր Հայրենիքին, և իրենց կարելիության սահմանին մեջ կաշխատին խաղաղությունը պաշտպանելու համար»:

Ավելորդ է ըսել, որ այս հակիրճ բայց ոգևորիչ խոսքերը Ի՛նչ մեծ ցնծությամբ ու օվասիոնով ընդունվեցան:

Մեր երկու հայ արիները այնպիսի գուրգուրանքով մը շքեպատված էին, որ Տարոնյան ստիպվեցավ խնդրել ներկաներին շատ չնեղել զանոնք իրենց անհատական հարցումներով:

Եթե Շահինյանը ընտանիքի հայր է, մինչ Ազարյանը դեռ 21 տարեկան հուժկու երիտասարդ մըն է, շափազանց համեստ իր շարժումներուն մեջ, ինքն ալ բեղավոր Շահինյանին պես: Ազարյան երկաթագործ եղած է Կիրովականի մեջ, մինչև այն օրը, երբ ան Շահինյանին աշակերտ դարձած է:

Ներկայիս ան ուսանող է Երևանի Մանկավարժական ինստիտուտին մեջ: Ազարյան «օղակ»ի մրցումներու մասնագետ է և ԽՍՀՄ-ի Սովետական Միության:

Հ.Մ.Բ.Մ.-ի կազմակերպած այս հիշատակելի ընդունելության հանդեսը վերջացավ տեղիս հայ մարզիկներու քանի մը ելույթներով, որոնք գնահատվեցան սովետ մարզիկներու կողմից:

Փարիզի Պալե դե սպորտը բերնե-բերան լեցուն է. երեսուն հազար հոգի կհաշվվի ներկաներուն թիվը: Երկու օր տևող մարզական այս մրցումները կատարելապես ապշեցուցին ոչ միայն հանդիսականները, այլ նաև ֆրանսացի և օտար մասնագետները:

Ազարյան 10 թվանիշ կստանա «օղակ»ի մրցման մեջ:

Ազարյանի այս «օղակ»ի մրցումն վերջ երբ դատավորները միաձայնությամբ 19 թվանշան տվին անոր, ժողովուրդը որոտընդոստ ծափահարությամբ ընդունեց զայն, որովհետև ցարդ աշխարհի վրա ուրիշ որե՛տ ասլետ (մարզիկ) չէ վարողացած հավասարի կամ հասնիլ այս շափազանց դժվարի՛ն մասնագիտության:

(«ԼՐԱՔԵՐ», 2 փետրվարի 1954 թ.)

ԵՐԳԱՎԱՆ ԾՆՆԻԿ ՊԵՐՊԵՐՑԱՆ ՖԻԼՄԻԵԼՖԻՈ ՄԵՋ

Ֆրանսահայ հանրածանոթ երգահան և խմբավար պարոն Օննիկ Պերպերյան Նյու-Յորքի Կարնեգի հոլին մեջ իր հաջող նվագահանդեսն հետո, հունվար 25, երկուշաբթի օր Ֆիլադելֆիա ժամանեց, հոն ևս նվագահանդես մը տալու համար մարտ 14-ին:

Նվագահանդեսը պիտի հովանավորվի Ս. Սահակ և Ս. Մեսրոպ եկեղեցվո կողմից:

Պարոն Պերպերյանի ներկայությունը օդատագործելով, երկուշաբթի իրիկուն թեյասեղան մը սարքվեցավ եկեղեցվո սրահին մեջ, ուր երաժշտասերներու լեցուն քաղմություն մը հավաքված էր:

Տաղանդավոր երգահան հյուրը հայկական երաժշտության մասին խիստ շահեկան դասախոսություն մը տվավ, հատկապես ծանրանալով հայ ժողովրդական երգի կառուցվածքին և բովանդակության վրա:

Ունկնդիրները խորապես տպավորվեցան պարոն Պերպերյանի դասախոսությունն, այն համոզումը կրելով, թե սրանչելի երաժշտություն մը օժտված ենք, և թե հանձարեղ և սանդձագործ ժողովուրդ է մերինը:

Թեյասեղանին նախագահեց Ս. Սահակ և Ս. Մեսրոպ եկեղեցվո ժրջան հովիվ ար-

ժանապատիվ Տեր Լևոն քահանա Առաքելյան, որ դասախոսը ներկայացուց իբրև հայ ժողովուրդի արժանավոր զավակներն մին, և իբրև մեծատաղանդ երգահան մը:

Դասախոսությունն հետո խանդավառ արտահայտություններ եղան տրվելիք երգահանդեսին մասին և ներկաներին շատեր իրենց գործնական աջակցությունը խոստացան ձեռնարկին հաջողության համար:

Նվագահանդեսը գլուխ հանելու համար ստեղծվեցավ հանձնախումբ մը, որ իր կազմը ընդարձակելով գործի պիտի անցնի:

Երգչախումբը իր առաջին փորձը պիտի կատարե առաջիկա երկուշաբթի օր եկեղեցվո սրահին մեջ:

Կասկած չունինք, որ պարոն Պերպերյանի նվագահանդեսը Ֆիլադելֆիո երաժշտասեր հասարակության կողմից պիտի արժանանա անվերապահ քաջալերության և հայ հյուր անգամ մը ևս պիտի պանծա իր մեծատաղանդ երգահաններին մեկուն միջոցով:

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԴԻՎԱՆ

(«ԼՐԱՔԵՐ», 22 փետրվարի 1954 թ.)

ԽՈՐԵՆ ՏԵՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ ՈՍԿԵ ՄԵԿԱԼՈՎ ԿՊԱՐԳԵՎԱՏՐՎԻ ՓԻԼԱԳԵԼՓԻՈ ՄԵՋ

Խորեն Տեր Հարությունյանի «Խաչն էջըր» արձանը Ջորջիա մարմարով քանդակված՝ պարզևատրվեցավ Ճ. Տ. Ուայտնեբի հիշատակին ոսկե մեդալով, Ժամանակակից ամերիկյան նկարչության և քանդակագործության 149-րդ տարեկան ցուցահանդեսին մեջ, որ դեռ կշարունակվի Պենսիլվանիո Գեղարվեստից ակադեմիային մեջ, և Ֆիլադելֆիա: Ճ. Տ. Ուայտնեբի հիշատակին մեդալը անցյալ տարիներու ընթացքին շահած են բազում անվանի արվեստագետներ:

Տեր Հարությունյանի քանդակի մասին արտահայտվեցան զանազան թերթեր: Կմեջբերենք հատված մը Նյու-Յորք Տայմզին, որ իր հունվար 24-ի թվին մեջ գրախոսելով ցուցահանդեսի մասին, Տեր Հարությունյանի երկը կնկարարե որպես «բարձրորեն ակնածելի, բայց անսպասանադրական «Խաչն էջըր» քանդակված մարմարով, որ ցույց կուտա երկարած մարմինը կողքին հակած շեղակի պատվանդանի մը վրա, նրբորեն քանդակված կերպար մը...»: Իսկ Ֆիլադելֆիո Սընի բյուլետեն թերթը հունվար 31-ի թվին

մեջ մեծկակ լուսանկարով մը ներկայացնելով այս արձանը, կըսեր որ «...Տեր Հարությունյանի կերպարը քանդակված է մեծապես այն մեկնաբանական եռանդով, որ կրնա նութագրեր քրիստոնեական դարաշրջաններու հին քանդակագործներուն գործերը, երբ կեղեցվույն համար այնքան մեծ նշանակություն ուներ խորհրդապաշտությունը: Կերպարը, որ Ակադեմիայի գլխավոր գալերիային կեդրոնը զետեղված է, ընկողմանած դիրքի մեջ է, հեց փայտե կառույցի մը վրա, որ կթելարե մեկ ծայրեն քիչ մը վեր բարձրացած խաչ մը»:

Այս ցուցահանդեսին մեջ ներկայացված է նաև Ջան Հովհաննեսը իր «Կոկետը» արձանագործությամբ:

Ցուցահանդեսը, որ հունվար 24-ին բացվեցավ հանրության, նախորդ երեկոյան տեղի ունեցած պրիվյուի փայլուն ընդունելութեն մը վերջը պիտի շարունակվի մինչև փետրվար 28:

ԹՂԹԱԿԻՅ

(«ԼՐԱՐՆԵՐ», 9 փետրվարի 1954 թ.)

ՍՈՎԵՏԱՆՑ ԵՐԳՉՈՒՅԻ ԶԵՐՈՒՅԻ ԴՈՒՈՒՄՆՑԱՆ ԿԶՄՈՅՑ ՓԵՐԻՉԻ ԻՐ ՈՒՆԿԵԳԻՐՆԵՐԸ

Փարիզյան մամուլը վերջերս ներբողալից տողեր նվիրած է սովետահայ հայանի երգչուհի Զարուհի Դոլուխանյանի (Զարա Դոլուխանովա) մասին, որ Փարիզի Մարինյի թատրոնին մեջ արտակարգ հաջողությամբ երգահանդես մը սարքած էր: Ավելի հետո ան երգած է նաև Սալ Կավոյի մեջ նույնքան հաջողությամբ:

«Կոմբա» հրաշալի կգտնե Դոլուխանյանի ձայնը և կմաղթե, որ նոր հայտագրով վերադառնա ֆրանսական բեմերուն վրա, իսկ «Լը Մոնդ»-ի երաժշտական քննադատ Ռընե Դյումենիլ կգրե.—

«Սովետ արվեստագետներուն ճյուղպա կատարած շրջապտույտը մեծ հաջողությամբ պսակվեցավ: Ասկի առաջ խոսեցանք բալետի հայազգի աստղերին Ֆարմանյանցի մասին, ներկայիս ալ հաճույքով կանդրադառնանք հայազգի երգչուհի Զարա Դոլուխանովայի:

«Այս զմայելի արվեստագիտուհին օժտրված է գեղարվեստական բոլոր ձիրքերով: Բոլոր շնորհները վրան թափած են, բարի

պարիկները օրրած են զայն, զերծ որևէ թերութենե: Անդուգական ու հմայիչ կերպարանքով, որուն վրա շնորհք մը ևս կավելցնե իր պարզությունը: Տիկին Դոլուխանովա արտակարգ զեղեցկությամբ ձայն մը ունի, հզոր, ծավալուն, օրինակելի երաժշտական զգայնությամբ, աշխատանքի շնորհիվ ոճավորված:

«Այս մեծձո-սոպրանոյին առաջին շեշտերեն իսկ կարելի եղավ զուշակել կատարելագործված երգչուհին:

«Զարա Դոլուխանովայի հայտագիրը կրադկանար հայկական ժողովրդական երգերե, ինչպես նաև Չայկովսկիե, Ռախմանինովի, Շաբոբինե, Գրիգե և Սեն Սանսե հատընտիր կտորներե: Տիկին Դոլուխանովա իր բյուրեղանման ձայնով զիտցավ մեկնաբանել այս բոլոր երգերն ալ իրենց պատշաճ ոճով ու շեշտով:

«Սովետահայ երգչուհին երբ Մոսկվայի երաժշտանոցը մտավ, նպատակ չուներ ձայնը մարզելու: Նախ դաշնակ, ապա ջութակ սորվեցավ և իր երաժշտական մշակույթը

կատարելագործելն վերջ ընտրեց երգը: Ան իր այդ ասպարեզին մեջ շուտով հառաջացավ և արժանացավ Ստալինյան մրցանակի ալ: Առաջին անգամ հրդեհ սկսավ Երևանի օպերային մեջ ու ապա անցավ Մոսկվա, ուր դարձավ հասարակության կուռքը: Սովետահայ սոխակը հիմա ալ պաշտամունքի առարկա դարձած է Փարիզցիներուն: Կույս քաղաքի հրաժշտական և գեղարվեստական շրջանակները լավագույն հիշատակը պիտի պահեն այս դմալելի երգչուհին»:

Մյուս կողմի «Առ» գեղարվեստական շաբաթաթերթը «Հայտնություն մը՝ երգչուհի Զարա Դուրյանովա» խորագրին տակ է միջի այլոց կգրե.—

«Ստալինյան մրցանակի պսակավոր սովետ երիտասարդ երգչուհի Զարա Դուրյանովան մեզի համար զգայացունց հայտնություն մըն է: Միջազգային մեծ մեծձո-սոպրանոներեն որո՛ւ անունը կուզա մեր լեզվին

— էսկե Ստիկնանի՛, Մարգարետա Կլո՛ւ: Զարա Դուրյանովայի ձայնին հնչականությունը նվազ հոյակապ չէ, քան իր հոշակավոր երեցներունը: Զայնական բացառիկ տեխնիկա մը (ռուսական երգի նոր դպրոց մը կա իտալականին և գերմանականին ճակատող) դեռստի արվեստագիտուհին մեջ զարգացուցած է ձկունության և զորեղության հատկություններ, զորս միացած կարելի է դռնել շատ բացառիկ կերպով: Այդ իսկ պատճառով թատերական ռեպերտուարը նույնքան լավ կհարմարի իրեն, որքան երգահանդեսներունը:

Ահավասիկ խիստ առաջնակարգ արվեստագիտուհի մը, որուն բազմաթիվ ձրերից միմիայն ավելի կրնան հայտնավորվիլ տարիներուն հետ, վասնզի Դուրյանովա 35 տարեկան է հիմա»:

(«ԼՐԱՅՆԸ», 13 փետրվարի 1954 թ.)

